ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/3.2-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի ապրիլի 10-ին կայացած նիստի N3/3.2-3-25 արձանագրությամբ՝ «ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից պահանջվող տեղեկատվության տրամադրման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ**-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ ընկերության պորտֆոլիոյի ստորագրված, կնքված կամ էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակի, ինչպես նաև կազմակերպության ֆինանսական նախահաշվում մի շարք կետերի տարբերության կամ դրանց բացվածքի, օրինակ՝ 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետերի ներկայացման վերաբերյալ, մրցութային

հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է ընկերության պորտֆոլիոյի էլեկտրոնային թվային ստորագրությամբ տարբերակը, ինչպես նաև կազմակերպության ֆինանսական նախահաշվում 2.1-2.3-րդ, 2.16-րդ, 2.30-2.31-րդ կետերի բացվածքը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Միաժամանակ, Հանձնաժողովը, քննարկելով տրամադրված պարզաբանումները, անդրադարձավ մրցութային հանձնաժողովի կողմից առաջադրված պայմանագրի կնքման նախապայմանների կատարմանը:

Մասնավորապես.

1. Նախնական համաձայնությունների գոյության բացառում և իրավաչափ ընթացակարգի երաշխավորում՝

Մրցույթի անցկացման և պայմանագրերի կնքման գործընթացը, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 1937-Ն հրամանի, ինչպես նաև գործառույթը կարգավորող այլ իրավական ակտերի, ենթադրում է իրավաչափ, և հատկապես, հավասար մրցակցային ընթացակարգի խիստ պահպանում, որի շրջանակներում **նախնական պայմանավորվածություններ, հատկապես բանավոր բնույթի, չեն կարող գոյություն ունենալ** մինչև իրավասու կողմերի միջև գրավոր պայմանագրի կնքումը:

Ավելին, որևէ նախնական բանավոր պայմանավորվածության մասին պնդումը, անկախ կազմակերպության կողմից նման արձանագրման կատարման դրդապատճառների, **իրավական հիմք չի ստեղծում** և **ոչ իրավական, ոչ փաստական հետևանքներ չի առաջացնում, այդ թվում՝ Կոմիտեի համար**:

Հանձնաժողովը արձանագրում է, որ որևէ ձևաչափով նախնական համաձայնություն կամ պայմանավորվածություն Կոմիտեի կողմից կազմակերպության հետ ձեռք չի բերվել, որը միտված է կամ կարող էր միտված լինել մրցույթի հայտարարված պայմանների արտապայմանագրային փոփոխմանը: Կազմակերպության կողմից ցանկացած նման հղում կարելի է որակել, որպես, լավագույն պարագայում, թյուրըմբռնման արդյունքում ձևավորված մեկնաբանություն, որն իրավական և փաստական տեսանկյունից հիմնավոր չէ: Միաժամանակ արձանագրվում է, որ մրցութային հանձնաժողովի կողմից պայմանագրի կնքման համար առաջադրված նախապայմանի՝ կազմակերպության կողմից հնարավորինս ամբողջական ու միանշանակ ընկալման ու համապատասխան վարքագծային առանձնահատկությունների ընտրությունը դյուրինացնելու նպատակով կազմակերպված ֆորմալ քննարկումը չի կարող որևէ կերպ որակվել՝ որպես արտապայմանագրային պայմանավորվածությունների ձեռքբերում:

2. Սահմանված էական նախապայմանների չկատարման փաստական և իրավական գնահատում

Մրցութային հանձնաժողովի որոշմամբ կազմակերպությանը տրվել էր առաջարկ. պայմանագրի կնքման նպատակով անհրաժեշտ էր սահմանված ժամկետում (2025թ. ապրիլի 23-ին՝ մինչև ժամը 17:00) ներկայացնել **շտկված ֆինանսական նախահաշիվ**՝ մրցութային հանձնաժողովի առաջարկությանը համապատասխանեցված տեսքով: Սակայն կազմակերպության կողմից ներկայացված արձագանքը չի բավարարում այս պահանջին, քանի որ.

- կազմակերպությունը չի ներկայացրել պահանջված ձևաչափով և բովանդակությամբ շտկված ֆինանսական նախահաշիվ, անգամ, հանդիպական վերջնագիր ներկայացնելով առ այն, որ. [«*Վերը նշված կետերի փոփոխությունների վերաբերյալ առարկություն չունենալու դեպքում և մեր առաջարկները ընդունելու պարագայում կիրականացվի նախահաշվի փոփոխությունը և կներկայացվի Հրոսաշրջային կոմիտեին»*] *կներկայացնեք Ձեր պայմանների վրա նախահաշիվը»*]
- կազմակերպության պատասխանը ոչ միայն չի համապատասխանում մրցութային հանձնաժողովի կողմից պայմանագրի կնքման համար առաջադրված նախապայմանին, այլև ներառում է **պայմանների փոփոխման առաջարկներ**, որոնք շեղվում են հրավիրված մրցույթի հիմնական պայմաններից, ինչը թույլատրելի չէ մրցակցային մասնակցության և անկողմնակալ դիտարկման տեսանկյունից՝ մրցույթի պայմանները հաստատուն, միասնական և անփոփոխ են բոլոր մասնակիցների համար,
- արձանագրվում է նաև, որ քննարկվող արձագանքով փորձ է կատարվում ֆորմալիզմի կիրառման միջոցով՝ երկընտրելի կամ ոչ միանշանակ ձևակերպումներով, բանակցության դաշտ մուտք գործել և պայմանագրային գործընթացի բովանդակությունը փոխել, ինչը **մրցույթի հիմքային սկզբունքների կոպիտ խախտում է**:

Անհրաժեշտ է նշել, որ մրցույթի հրավերով սահմանված պայմանները, ներառյալ ֆինանսավորման շրջանակը, ծախսերի կառուցվածքը և արտացոլված իրավական պարտավորությունները, **ունեն անփոփոխ բնույթ** և **չեն կարող վերանայվել կամ փոփոխվել մրցույթի ավարտից և մրցույթի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո**: Այս մոտեցումը հիմնվում է ոչ միայն ազգային մրցութային կարգավորումների, այլ նաև միջազգային լավագույն պրակտիկայի վրա՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունն ու մասնակիցների հավասար հնարավորությունները: Պայմանագրային բանակցությունները հնարավոր են, սակայն բացառապես պայմանների հստակեցման, լավարկման և դրամաշնորհի տրամադրման նպատակայնության ու ռեսուրսային ծախսի բարելավումների, այդ թվում՝ գնային դրական տեղաշարժերի տեսանկյունից և չի կարող վերաբերել հայտարարված մրցութային պայմաններին:

3. Հավասարության սկզբունքի խախտման անհնարինությունը

Կազմակերպության կողմից ներկայացված փոփոխությունների առաջարկը, որից բխում են նոր իրավական պարտավորություններ կամ առավելություններ կազմակերպության համար, եթե ընդունվեր, կխախտեր մրցույթի մյուս մասնակիցների նկատմամբ ապահովված հավասարության սկզբունքը: Մասնավորապես, քննարկվող մրցույթի հրավերով առաջադրվել են կոնկրետ պայմաններ, կանխատեսումներ ու ակնկալիքներ, որոնք պետք է միասնական ու անփոփոխ լինեն բոլոր մասնակիցների համար, ինչին ուղղված է նաև սույն մրցույթի արդյունքների ամփոփումից հետո տեղ գտնող գործընթացը:

Այսպիսի փոփոխությունները **ստեղծում են անհավասար մրցակցային դաշտ**, ինչը հակասում է ինչպես ՀՀ գործող օրենսդրությանը, այնպես էլ մրցութային գործընթացների բուն նպատակին: Այդ պատճառով Կոմիտեն իրավունք չունի և չի կարող քննարկման առարկա դարձնել հրապարակված պայմանների փոփոխումը՝ անկախ ներկայացված առաջարկությունների բովանդակությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է արձանագրել, որ **կազմակերպության կողմից պայմանագրի կնքման համար Մրցութային հանձնաժողովի առաջադրած անհրաժեշտ նախապայմանները փաստացիորեն չեն կատարվել**:

Մրցութային հանձնաժողովը վերահաստատում է իր գործելակերպի սկզբունքային հիմքերը, մասնավորապես՝

- հրապարակված մրցութային պայմանների անփոփոխելիության,
- մասնակիցների իրավահավասարության և մրցակցային միջավայրի պահպանման,
- հանրային միջոցների արդյունավետ և թափանցիկ օգտագործման,
- ընթացակարգային իրավաչափության ապահովման,
- և հանրային շահի առաջնահերթության պահպանումը:

Արդյունքում ձևավորվել է հետևյալ դիրքորոշումը.

- Կազմակերպության կողմից վերջնագրային և փաստացի փոփոխված պայմանների ներկայացումը գնահատվել է՝ որպես հայտարարված մրցույթի հրապարակային պայմաններին չհամապատասխանող մոտեցում,
- արձանագրվել է, որ պայմանագրի կնքման համար պահանջվող նախապայմանները **չեն կատարվել հանձնաժողովի կողմից սահմանված պայմանների շրջանակում**,
- տրված մեկնաբանություններում առկա են ձևակերպումներ, որոնք մեկնաբանելի են և կարող են հանգեցնել պայմանագրային հավակնությունների, որոնք որևէ փուլում իրավական հիմք չեն ունեցել:

Այս փուլում Մրցութային հանձնաժողովը գտնում է, որ **դրամաշնորհային պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և բավարար պայմանները չեն ապահովվել կազմակերպության կողմից**, ինչի արդյունքում վերջինիս հետ պայմանագիր չի կնքվում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Դադարեցնել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ՄԵՆՔ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի** հետ համապատասխան դրամաշնորհի պայմանագրի կնքման գործընթացը:

2. **Լուծարել** Ծրագրի հավելված 2-ի 3.2 կետով նախատեսված **«Զբոսաշրջային ներքին ցուցահանդեսի կազմակերպում և խթանում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթը և հայտարարել նոր մրցույթ:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Հ.Սահակյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____